ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 10, 1960 Общественные науки

ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳԻՏԱԿԱՆ ՍԵՍԻԱՆ ԿԻՐՈՎԱԿԱՆՈՒՄ ԵՎ ԱԼԱՎԵՐԴՈՒՄ

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտը Կիրովական և Ալավերդի քաղաքներում սեպտեմբերի 30-ից մինչև հոկտեմբերի 3-ը ընկած ժամանակամիջոցում անցկացրեց գիտական սեսիաներ՝ նվիրված Հայաստանում սովետական կարգերի հաստատման և Հայաստանի Կոմունիստական պարտիայի կազմավորման պանծալի 40-ամյակին։

Ալ. Մյասնիկյանի անվան Կիրովականի Քիմիական կոմբինատի կուլտուրայի պալատում սեսիան հակիրճ ներածական խոսքով բացեց Պատմության ինստիտուտի դիրեկտոր, դոկտոր-պրոֆեսոր Ա. Բ. Հարությունյանը։ Նա իր ելույթում նշեց, որ Հայաստանում Սովետական իշխանության հաստատման և Հայաստանի Կոմունիստական պարտիայի կազմավորման 40-ամյա նշանակալից տարելիցը արժանավայել դիմավորելու նպատակով Պատմության ինստիտուտի գիտական կոլեկտիվը մշակել է մի շարք միջոցառումներ, որոնցից մեկն էլ հանդիսանում է ներկա գիտական սեսիան, որտեղ հանդես կգան Ակադեմիայի մի խումբ անվանի գիտնականներ։

«Սովետական կարգերի հաղթանակը Հայաստանում» թեմայով սեսիայում հետաքրքիր զեկուցում կարդաց սովետական հասարակության պատմության սեկտորի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Ա. Մ. Հակոբյանը։

Փաստական հարուստ նյութերի հիման վրա զեկուցողը վեր հանեց՝ հանուն Սովետական իշխանության, հայ ժողովրդի մղած հերոսական պայքարի պատմության էջերը։ Նշելով Հոկտեմբերյան ռևոլյուցիայի դերը Հայաստանում սոցիալիզմի համար մղվող պայքարի ուժեղացման և մասսայական ռևոլյուցիոն ելույթների ծավալման գործում, ընկ. Հակոբյանը մասնավորապես անդրադարձավ 1920 թ. Մայիսյան ապստամբության հերոսամարտերի նկարագրության վրա։ Մայիսյան ապստամբությունը՝ Սովետական իշխանության համար հայ ժողովրդի մղած պայքարի տարեգրության մեջ մտել է որպես նրա ամենափայլուն դրվագներից մեկը։ Այնուհետև ընկ. Հակոբյանը համառոտակի նշեց դաշնակների անփառունակ տիրապետության շրջանում Հայաստանի քայքայված ու թշվառ վիճակը և արևմտյան իմպերիալիստական տերությունների դերը ռևոլյուցիոն շարժումների ճնշման գործում։ Բայց դաշնակներին և նրանց օտարերկրյա տերերին չհաջողվեց կասեցնել հայ աշխատավորության ձգտումը իր հայրենիքի ազատագրման ուղղությամբ։ 1920 թ. նոյեմբերի 29-ին ապստամբած հայ ժողովուրդը, Կոմունիստական պարտիայի գլխավորությամբ, ռուսական 11-րդ Կարմիր Բանակի եղբայրական օգնությամբ թոթափեց դաշնակցական ատելի լուծը և Հայաստանում հաստատեց սովետական կարգեր։

Մարտերում կռված Սովետական Միության Կոմունիստական պարտիայի մարտական ջոկատներից մեկի՝ Հայաստանի Կոմպարտիայի կազմավորման 40-ամյակին էր նվիրված ՍՄԿՊ Կենտկոմին առընթեր Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական ֆիլիալի դիրեկտոր, պատմական գիտությունների թեկնածու Խ. Հ. Բարսեղյանի ուշագրավ զեկուցումը։

Զեկուցման մեջ նշվեց, որ Հայաստանի Կոմունիստական պարտիայի ձևավորումը կարևոր իրադարձություն հանդիսացավ Հայաստանի բանվոր դասակարգի և գյուղացիության կյանքում։ Իր գոյության առաջին իսկ օրվանից նա ղեկավարել և առաջնորդել է աշխատավոր մասսաներին՝ հանուն սովետական կարգերի հաստատման Հայաստանում, հանուն սոցիալիզմի։ Այնուհետև ընկ. Բարսեղյանը համառոտակի կերպով կանգ առավ Մեծ Լենինի ստեղծած ՌՍԴԲՊ ղեկավար և ուղղություն տվող գերի, ինչպես նաև Անդրկովկասի առաջին հայ մարքսիստական խմբակներից մինչև Հայաստանի Կոմպարտիայի կազմակերպական ձևավորումն ընկած իրադարձություններով հարուստ ժամանակաշրջանի դեպքերի վրա։ Զեկուցողն ընդգծեց, որ Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունները աճել ու ամրապնդվել են ամեն գույնի ու երանգի նացիոնալիստական հոսանքների ու պարտիաների դեմ մղվող համառ պայքարում։

Հայաստանի պարտիական կազմակերպությունների կյանքում կարևոր էտապ եղավ 1919 թ. սեպտեմբերին Երևանում հրավիրված նրանց առաջին անլեգալ խորհրդակցությունը, որտեղ ընտրվեց ՌԿ(բ)Պ Հայաստանի Կոմիտե (Արմենկոմ)։ Այդ խորհրդակցությունը հանդիսացավ Հայաստանի պարտիական կազմակերպությունները մի միասնական ղեկավարության ներքո միավորելու առաջին քայլը։ Մի քանի ամիս անց, 1920 թ հունվարին, տեղի ունեցավ Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների առաջին անլեգալ կոնֆերանսը, որն ընտրեց Արմենկոմի նոր կազմ և Հայաստանի Կոմունիստական պարտիայի առաջնահերթ խնդիրը համարեց ռևոլյուցիոն ճանապարհով դաշնակների իշխանության տապալումը և սովետական կարգերի հաստատումը երկրում։

Հայաստանի պարտիական կազմակերպությունների կազմակերպական վերջնական կազմավորումը տեղի ունեցավ 1920 թ. ամռանը։ 1920 թ. ապրիլին, ՌԿ(բ)Պ Կենտկոմի որոշման համաձայն, ՌԿ(բ)Պ Կովկասյան Երկրային Կոմիտեի փոխարեն կազմվեց ՌԿ(բ)Պ Կենտկոմի Կովկասյան բյուրո, որը ստեղծեց պարտիական ղեկավար կենտրոններ Վրաստանում և Հայաստանում (մինչև այդ, 1920 թ. փետրվարին Բարվում տեղի էր ունեցել Ադրբեջանի Կոմպարտիայի առաջին անլեգալ համագումարը)։ Այսպես, Թիֆլիսում ստեղծվեց Հայաստանի Կ(բ)Պ Կենտկոմի Արտասահմանյան բյուրո, որը որոշ ժամանակ անց տեղափոխվեց Բաքու։ 1920 թ. հուլիսի 30-ին ՌԿ(բ)Պ Կենտկոմի Կազմբյուրոն որոշում է կայացնում Վրաստանում, Հայաստանում և Ադրբեջանում մարզային կազմակերպությունների իրավունքով Կոմպարտիաների ստեղծման մասին, որոնք պետք է ենթարկվեն անմիջականորեն Կովկասյան բյուրոյին։ 1920 թ. սեպտեմբերի սկզբին ՌԿ(բ)Պ Կենտկոմի Կովկասյան բյուրոն քննարկեց «Հայաստանի Կոմունիստական պարտիայի Կենտկոմի կազմի և Արտասահմանյան բյուրոյի մասին» հարցը և հաստատեց ՀԿ(բ)Պ Կենտկոմի կազմը։ Այսպես ավարտվեց ՀԿ(բ)Պ կազմակերպական ձևավորումը, որը, ավելի համախմբած իր շարքերը, հայ ժողովրդին վճռական մարտերի տարավ հանուն սոցիալիզմի և 1920 թ. նոյեմբերի 29-ին Հայաստանում հռչակեց Սովետական իշխանություն։

Անցած քառասուն տարիների ընթացքում Սովետական Հայաստանի աշխատավորները աննախընթաց հաջողություններ հասան Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ։

Սեսիայի մասնակիցները մեծ հետաքրքրությամբ լսեցին պատմական գիտությունների դոկտոր Ա. Ն. Մնացականյանի զեկուցումը՝ «Լենինը և հայ ժողովուրդը» թեմայով։

Ընկ. Մնացականյանը բազմաթիվ նորահայտ նյութերի ու փաստերի վկայակոչման միջոցով ցույց տվեց, որ Մեծ Լենինը հայ ժողովրդի, ինչպես նաև Ռուսաստանի կազմի մեջ մտնող մյուս ժողովուրդների բախտով հետաքրքրվել է դեռևս անցյալ դարի 90-ական թվականներից սկսած, ծանոթ է եղել մի շարք հայ տնտեսագետների աշխատությունների հետ, որոնք և օգտագործել է իր «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» գրքում, հետաքրքրվել է անգամ հայկական գեղարվեստական գրականությամբ և այլն։

Վ. Ի. Լենինի հետ անձնական կապեր են ունեցել մոտ վեց տասնյակ հայ ռևոլյուցիոն գործիչներ, որոնք բոլորն էլ հանդիսացել են Կոմունիստական պարտիայի ակտիվ գործիչներ, Լենինի հավատարիմ աշակերտներ ու հետևորդներ։

Միայն 1900—1907 թթ. ընթացքում Լենինը տարբեր առիթներով 48 անգամ անդրադարձել է Անդրկովկասին, Հայաստանին ու հայ ժողովրդի վիճակին, մի փաստ, որը ցույց է տալիս, թե ռևոլյուցիոն փոթորիկների շրջանում անգամ Լենինը որքան ուշադիր և բազմակողմանի վերաբերմունք է ունեցել Ռուսաստանի կազմի մեջ մտնող ժողովուրդների, այդ թվում նաև հայ ժողովրդի բախտի նկատմամբ։ Լենինը դրականապես է վերաբերել հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումներին, բարձր գնահատելով նրա պայքարը թուրքական բռնակալության ու ցարական ինքնակալության դեմ։

Սովետական կարգերի հաստատման ժամանակ Կարմիր Բանակի կողմից հայ ժողովրդին ցույց տրված եղբայրական օգնությունը կատարվեց անմիջականորեն Լենինի ցուցումով։

Վ. Ի. Լենինը 1920 թ. դեկտեմբերին Մոսկվայում ընդունելով Հայաստանի Հեղկոմի ներկայացուցիչներին, մեծ ուշադրությամբ լսում է նրանց և կազմակերպում ամեն տեսակ օգնություն ու աջակցություն բոլոր «բարեկամներից» կողմից խարված ու ծվատված Հայաստանին, որի շնորհիվ էլ այսօր ազատաբաղձ հայ ժողովուրդը, տոնելով իր ազատ կյանքի 40-ամյա փառապանծ հոբելյանը, անսահման երախտագիտությամբ է նշում Մեծ Լենինի և նրա ստեղծած կոմունիստների անպարտելի պարտիայի անունը։

«Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսության նվաճումները 40 տարում» թեմայով սեսիայում բովանդակալից զեկուցում կարդաց ՀՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ Մ. Պ. Աղայանը։ Ընկ. Աղայանը համառոտակի ներկայացնելով Հայաստանի ժողովրդական տնտեսու-

թյան քայքայված վիճակի մոայլ պատկերը նախասովետական շրջանում, այնուհետև նշեց հսկայական այն նվաճումները, որ ձեռք է բերել հայ ժողովուրդը Սովետական իշխանության անցած 40 տարիների ընթացքում։ Նախկին որբերի ու արցունքի երկիր Հայաստանը այժմ դարձել է առաջավոր արդյունաբերական երկիր, մեքենայացված գյուղատնտեսության երկիր, բարձր կուլտուրայի ու զարգացած գիտության երկիր։

Բնակչության մեկ շնչին ընկնող էլեկտրաէներգիայի քանակով Հայաստանն իր ետևում է թողել Ֆրանսիային, Իտալիային, Հոլանդիային և այլ զարգացած կապիտալիստական երկրների, իսկ Թուրքիայից և Իրանից առաջ է անցել 100 անգամ։ Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսությունը բուռն վերելք ապրեց հատկապես հետպատերազմյան տարիներին։ Է՛լ ավելի մեծ են նրա զարգացման հեռանկարները յոթնամյակում, որը հաջողությամբ իրագործվում է։ 1913 թ. համեմատությամբ, 1960 թվականին Հայաստանի արդյունաբերության համախառն արտադրանքը նախնական հաշվումներով կավելանա մոտ 70 անգամ, իսկ գյուղատնտեսության արտադրանքը՝ ավելի քան չորս անգամ։

Սեսիայի մասնակիցները մեծ հետաքրքրությամբ լսեցին իրենց հարազատ քաղաքի մասին պատմական գիտությունների թեկնածու Կ. Ս. Կողմոյանի «Բարգավաճող Կիրովականը» խորագիրը կրող զեկուցումը։

Համառոտ ակնարկում նկարագրելով Կիրովականի պատմական անցյալը, զեկուցողն այնուհետև նշեց նրա բուռն զարգացումը Սովետական իշխանության տարիներին, երբ երբեմնի հետամնաց, փոքրիկ գյուղաքաղաքը՝ նախկին Ղարաքիլիսան, դարձավ սոցիալիստական ինդուստրիալ քաղաք։ 1935 թ. հունվարին Հայաստանի Կենտգործկոմի Նախագահության որոշմամբ Ղարաքիլիսան վերանվանվում է Կիրովական՝ ի հավերժացումն պարտիական ու պետական ականավոր գործիչ Ս. Մ. Կիրովի հիշատակի։

Սովետական կարգերի հաստատումից հետո, մեկը մյուսի ետևից կառուցվում ու շարք են մտնում բազմաթիվ արդյունաբերական ձեռնարկություններ։ Կիրովականի հետագա զարգացման համար մեծ նշանակություն ունեցավ 1929 թվականին Ալ. Մյասնիկյանի անվան քիմիական կոմբինատի հիմնադրումը, որի առաջին արդյունաբերական արտադրանքը ստացվեց 1933 թ. մարտի 23-ին։ Եթե մի ժամանակ, քիմիական կոմբինատի հիմնադրման տարիներին, օտարերկրյա մասնագետներն էին օգնում կիրովականցիներին՝ վառարանների կառուցման և սարքավորումների տեղադրման աշխատանքներում, ապա այժմ քիմիագործները իրենք են օգնում Չինաստանի, Լեհաստանի, Ռումինիայի և այլ երկրների աշխատավորներին՝ քիմիական օբյեկտների կառուցման և շահագործման գործում։

Կիրովականը արագ զարգացում ապրեց հատկապես հետպատերազմյան տարիներին։ Այժմ Կիրովականի արդյունաբերական ձեռնարկությունները երկրին տալիս են ավելի քան 120 տեսակի արտադրանք։ Ստեղծվել են մեքենաշինական, հաստոցաշինական, սարքաշինական և այլ գործարաններ։ Արագորեն աճում և ընդլայնվում է թեթև արդյունաբերությունը։ Քաղաքում գործում են Մորթու-մուշտակի, Կամոյի անվան տրիկոտաժի, Կորդի, Շահումյանի անվան կարի, կոշիկի, փայտամշակման ֆաբրիկաները և բազմաթիվ արտելներ։

Հոյակապ են Կիրովականի զարգացման հեռանկարները առանձնապես յոթնամյակում։ 1962 թվականին շահագործման կհանձնվի արհեստական մետաքսաթելի գործարանը։ Վերջին տարիների ընթացքում Կիրովականում ստեղծվել են Ավտոմատիկայի, Քիմիայի նախագծային և գիտահետազոտական ինստիտուտները, Ինքնուրույն կոնստրուկտորական բյուրոն, որոնց երիտասարդ գիտական կոլեկտիվները օգնում են արտադրության ավտոմատացմանը, նոր տեխնիկայի արմատավորմանը և աշխատանքի արտադրողականության բարձրացմանը։

Կիրովականի աշխատավորները մտնելով սոցիալիստական մրցության մեջ Բաթումիի, Սուխումիի և Սումգայիթի իրենց բարեկամների հետ, հաջողությամբ դատարում են յոթնամյակի առաջադրանքները։ Լայն թափ է ստացել պայքարը կոմունիստական աշխատանքի կոչման և կոմունիստական կենցաղավարության համար։ Այսպիսին են ահա Սովետական Հայաստանի սոցիալիստական քաղաքներից մեկի՝ Կիրովականի աշխատավորների նվաճումները Սովետական իշխանության անցած քառասուն տարիների ընթացքում։

Հայկական ՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ Ս. Տ. Երեմյանը սեսիայում հանդես եկավ «Հայ ժողովրդի ծագումը» ուշագրավ զեկուցումով, որը մեծ հետաքրքրություն առաջացրեց ունկնդիրների շրջանում։

Սեսիայի աշխատանքները ամփոփեց ՀՍՍՌ ԳԱ Հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ՀՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Ա. Բ. Կարինյանը, որի ելույթը ներկաների կողմից ընդունվեց ջերմորեն։

Հոկտեմբերի 3-ին, նույն ծրագրով, տեղի ունեցավ Պատմության ինստիտուտի գիտական սեսիան Ալավերդու Պղնձա-քիմիական կոմբինատի կուլտուրայի պալատում, ուր գիտնականները նույնպես մեծ գոհունակությամբ ընդունվեցին բանվոր-ծառայողների և կոլտնտեսականների կողմից։

Պատմության ինստիտուտի կազմակերպած այս գիտական սեսիաները, որոնք հանդիսանում են ՍՄԿՊ Կենտկոմի 1960 թ. հունվարի 9-ի «Արդի պայմաններում պարտիական պրոպագանդայի խնդիրների մասին» որոշման անմիջական արձագանքներից մեկը, մի անգամ ևս ցույց տվեցին գիտության և արտադրության աշխատողների սերտ կապերի կարևորությունն ու անհրաժեշտությունը, կյանքի, պրակտիկայի հետ գիտության սերտ կապի անհրաժեշտությունը և հանդիսացան ապացույցը այն բանի, որ սովետական գիտությունը իրոք ծառայում է ժողովրդին։

Հ. ՈՒ. ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

ՀԱՅ ԳԻ ... ԱԿԱԴԵՄԻԱ